ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ- 213
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան « 02 » « 05 » 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պետական մարմին)՝ ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Գ. Սաֆարյանի, մի կողմից, և «Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Վ. Բաղալյանի, մյուս կողմից, (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պետական մարմինը հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Պետական մարմնի կողմից հատկացված միջոցներն ուղղել «Աշխատարաններ՝ միջազգային փորձի փոխանակմամբ» ծրագրի իրականացման ծախսերին՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող ծրագրի (Հավելված N 1) և ծախսերի նախահաշվի (Հավելված N 2):

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պետական մարմինը պարտավոր է՝

2.1.1. Ի կատարումն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի ապրիլի 29-ի N 793-Ա/2 հրամանի՝ հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ֆինանսավորվող մշակութային դրամաշնորհային ծրագրերի «Ստեղծագործական կրթամշակութային նախագծեր» անվանակարգի մասնագիտական խմբի 2022 թվականի մարտի 11-ի նիստի N 5 արձանագրությունը՝ Կատարողին հատկացնել գումարը «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի «1168. Արվեստների ծրագրի» «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված անհատույց դրամաշնորհների հաշվին,

2.1.2. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում ընդունել Կատարողի կողմից Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված հաշվետվությունները, ընդունելուց հետո ստորագրել հանձնման-ընդունման արձանագրությունը:

2.2. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ չմիջամտելով վերջինիս գործունեությանը,

2.2.2. Կատարողի կողմից Պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում հետ պահանջել փոխանցված գումարը, միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը,

2.2.3. Կատարողից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերստին կատարել ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարված աշխատանքները,

2.2.4. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում Կատարողից պահանջել ներկայացնել Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով նախատեսված հաշվետվությունը:

2.3. Կատարողը պարտավոր է՝

2.3.1. Պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվի, ինչպես նաև Պայմանագրի այլ պարտադիր պահանջները,

2.3.2. Պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն աշխատանքների կատարման ընթացքի մասին,

2.3.3. Մինչև Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված հաշվետվությունների ներկայացման ժամկետի ավարտը Պետական մարմնին ներկայացնել հաշվետվություն (ֆինանսական և բովանդակային) իր կողմից իրականացված ծախսերի և կատարված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը պարունակում է Պետական մարմնի կողմից հաստատված ձևանմուշով լրացված ձևը (նախահաշվի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կատարողի մոտ, վերջինս պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար), իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառման իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.3.4. Պայմանագրից բխող աշխատանքները չկատարելու դեպքում վերադարձնել Պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5.0 (հինգ) տոկոսի չափով,

2.3.5. Հրապարակել Պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.3.6. Ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ Պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները վերացնելու նպատակով,

2.3.7. Սույն Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների կատարման գործընթացը կազմակերպել «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.3.8. Պայմանագրով սահմանված աշխատանքների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան մինչև 2022 թվականի դեկտեմբերի 23-ը:

2.4. Կապարողն իրավունք ունի՝

2.4.1. Պետական մարմնի կողմից Պայմանագրի 2.1.1-ին ենթակետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով Պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը,

2.4.2. Անհրաժեշտության դեպքում Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների իրականացման համար Պետական մարմինը Կատարողին հատկացնում է 5989.8 հազար (հինգ միլիոն ինը հարյուր ութսունինը հազար ութ հարյուր) դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2,

3.2. Պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը Կատարողին հատկացվում է Պայմանագրի կնքումից հետո, իսկ 20 %-ը՝ Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ Կատարողի հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2022 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված աշխատանքները Կատարողի կողմից ներկայացվում են Պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան Պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունները Կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ Պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու համար կողմերից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում մյուս կողմին պատճառած վնասների լրիվ ծավալով՝օրենքով սահմանված կարգով,

5.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ Պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների լրիվ չափով փոխհատուցում,

5.3. Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը Կատարողի կողմից այն կատարել շարունակելն աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում Պետական մարմինը իրավունք ունի կամ ստանալ Պայմանագրի 3.1-ին կետով նախատեսված գումարի լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել Պայմանագրի հարկադիր կատարումը,

5.4. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների համար պայմանագրով սահմանված ժամկետները Կատարողի կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պետական մարմնին վճարում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված աշխատանքների արժեքի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար,

5.5. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար նախատեսված ժամկետները չպահպանելու դեպքում Կատարողը Պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը մինչև 2022 թվականի սեպտեմբերի 1-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը մինչև 2022 թվականի սեպտեմբերի 30-ը:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8.ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

9.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պարտավորությունների ողջ ծավալով կատարման ավարտը:

10. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

10.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ,

10.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից,

10.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կատարողին տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ,

10.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր,

10.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կատարողից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

11. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

11.1. Պայմանագիրը կազմված է 11 թերթից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ,

11.2. Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

12. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոն» ՓԲԸ
Երևան, Վ. Սարգսյան 3	ք. Երևան, Աբովյան 11
Կառավարական տուն N 2	
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011032878	Հ/Հ 1570022619620100, ՀՎՀՀ 02514253
ՀՎՀՀ 02698732	Հեռ.՝ 091 49 48 44
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Գ. Սաֆարյան	_____ Վ. Բաղայան
Կ. Տ.	Կ. Տ.

Հավելված N 1
02 05 2022թ.
N 213 պայմանագրի

ԾՐԱԳԻՐ

«Աշխատարաններ՝ միջազգային փորձի փոխանակմամբ

1	Կազմակերպության անվանում	«Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոն» ՓԲԸ
2	Կազմակերպության գտնվելու վայր	ՀՀ, Երևան 0001, Աբովյան 11
3	Ծրագրի անվանում	«Աշխատարաններ՝ միջազգային փորձի փոխանակմամբ. ԳԱԿ - Կրեավիվա (Creaviva Children's Museum)» ծրագիր
3.1	Բովանդակություն	Հենրիկ Իգիթյանի անվ. գեղագիտության ազգային կենտրոնը Շվեյցարիայի Բեռն քաղաքի Պաուլ Կլեե կենտրոնի Creaviva մանկական թանգարանի հետ համատեղ 2022 թ. հունիս - օգոստոս ամիսներին նախատեսում է Հայաստանի Հանրապետության երեք՝ Երևան, Վանաձոր և Գորիս քաղաքներում իրագործել «Աշխատարաններ՝ միջազգային փորձի փոխանակմամբ. ԳԱԿ - Կրեավիվա (Creaviva Children's Museum)» ծրագիրը՝ ընդհանուր տևողությամբ՝ 4 շաբաթ: Այն նախատեսում է շվեյցարացի երեք մասնագետի այց Հայաստան՝ Պաուլ Կլեեի մեթոդների վրա հիմնված հատուկ ծրագրով Երևան, Վանաձոր և Գորիս քաղաքների հաշմանդամություն ունեցող և չունեցող երեխաների և պատանիների, ինչպես նաև Գեղագիտության ազգային կենտրոնի սաների հետ մասնագիտական վարպետության դասերի անցկացման և Գեղագիտության ազգային կենտրոնի մասնագետների վերապատրաստման նպատակով: Նախագծի շրջանակում շվեյցարացի մասնագետները երեխաների և կենտրոնի դասավանդողների համար կիրականացնեն ընդհանուր առմամբ 20 աշխատարան՝ ստեղծագործական

		ու կրթական բաղադրիչների կիրառմամբ: «Աշխատարաններ՝ միջազգային փորձի փոխանակմամբ. ԳԱԿ - Կրեավիվա (Creaviva Children's Museum)» նախագծի ամբողջ ընթացքը և ամփոփիչ միջոցառումները կնկարահանվեն, իսկ ավարտին, որպես ամփոփում և հաշվետվություն, կներկայացվի հաշմանդամություն ունեցող և չունեցող երեխաների մասնակցությամբ ինտերակտիվ ցուցահանդես՝ ներկայացման տարրերով: Կստեղծվի նաև նախագիծը ներկայացնող կարճամետրաժ ֆիլմ: Ծրագրի շարունակությունը նախատեսում է հայկական կողմի փոխադարձ այց Creaviva մանկական թանգարան՝ ԳԱԿ սաների աշխատանքների ցուցադրությամբ, որը տեղի կունենա 2023 թ. գարնանը: Իսկ սաների՝ նախագծի ընթացքում ստեղծած աշխատանքներն այդ նպատակով Շվեյցարիայի Բեռն քաղաք կտեղափոխվեն 2022 թ. հոկտեմբեր - նոյեմբեր ամիսներին:
3.2	Նպատակ	«Աշխատարաններ՝ միջազգային փորձի փոխանակմամբ. ԳԱԿ - Կրեավիվա (Creaviva Children's Museum)» ծրագիրը կնպաստի կենտրոնի գործունեության մեջ մշակութային կրթության ոլորտում նախ և առաջ միջազգային կապերի հաստատման, միջազգային փորձի ներդրման ու փոխանակման գործընթացների ակտիվացմանն ու զարգացմանը: Կակտիվանան նաև կենտրոնի՝ Երևանի և մարզային (հատկապես՝ սահմանամերձ) շրջանակում ինչպես ուսուցիչների, այնպես էլ սաների միջև շփումներն ու փոխգործակցությունը: Ծրագրի իրականացման կարևորագույն նպատակներից է նաև մանկական արվեստի հանրահռչակումն ինչպես Հայաստանում, այնպես էլ Հայաստանից դուրս: Ծրագրի շնորհիվ ապահովվում է նաև նոր և ժամանակակից մեթոդների կիրառումը ուսումնակրթական գործընթացում, որոնք կտարածվեն նաև միջդիսցիպլինար հարթակ՝ փուլ առ փուլ ընդգր-

		կելով կենտրոնի գործունեության բոլոր ուղղություններն ու ստորաբաժանումները:
3.3	Անցկացման ժամկետ	2022 թ. հունիս - օգոստոս
3.4	Անցկացման վայր	Հայաստանի Հանրապետություն՝ Երևան, Վանաձոր, Գորիս քաղաքներ
3.5	Ակնկալվող արդյունքներ	Ծրագրի իրականացման արդյունքում կենտրոնի մասնագետներն ու սաները հնարավորություն կունենան շփվելու ոչ միայն միմյանց, այլև շվեյցարացի իրենց գործընկերների ու Պաուլ Կլեե կենտրոնի Creaviva մանկական թանգարանում ուսանող երեխաների հետ: Բացի այդ, ծրագիրը կենտրոնի մասնագետների համար միջազգային չափանիշներին համապատասխան վերապատրաստվելու մեծ հնարավորություն է ստեղծում, հատկապես հաշվի առնելով, որ նման պրակտիկաները կենտրոնում բավականին երկար ժամանակ տեղի չեն ունեցել: Այդ ամենը, միանշանակ, նոր շունչ կհաղորդիկենտրոնում իրականացվող ուսումնաստեղծագործական գործընթացներին և թույլ կտա կենտրոնին քայլել ժամանակակից աշխարհին զուգընթաց:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	«Աշխատարաններ՝ միջազգային փորձի փոխանակմամբ. ԳԱԿ - Կրեավիվա (Creaviva Children's Museum)» ծրագրի շահառուներն են Երևանի, Վանաձորի, Գորիսի երեխաները և պատանիները, Հենրիկ Իգիթյանի անվ. գեղագիտության ազգային կենտրոնի Երևանի, Վանաձորի և Գորիսի ստորաբաժանումների 10 - 16 տարեկան սաները, ինչպես նաև՝ որպես վերապատրաստվող մասնագետներ՝ կենտրոնի նշված ստորաբաժանումների մասնագետները: ԳԱԿ Երևան՝ 270 երեխա, 20 մասնագետ ԳԱԿ Վանաձոր՝ 250 երեխա, 15 մասնագետ ԳԱԿ Գորիս՝ 250 երեխա, 15 մասնագետ

		Հաշմանդամություն ունեցող երեխաներ և պատանիներ՝ 150 Ցուցահանդեսի այցելուներ՝ 500-800 Մասնագիտական բուհերի ուսանողները (Փ. Թերլեմեզյանի անվ. Գեղարվեստի պետական քոլեջ, Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա և այլն) ծրագրի շրջանակում իրականացվող աշխատարաններում կընդգրկվեն որպես օգնականներ՝ սովորել մասնակցելով սկզբունքի համաձայն: Աշխատարանների օգնականներըկընտրվեն մրցույթ/հարցազրույցի արդյունքում:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

---------- Գ. Սաֆարյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության
ազգային կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան, Աբովյան 11

«Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570022619620100, ՀՎՀՀ 02514253
Հեռ.՝ 091 49 48 44
Տնօրեն՝

---------- Վ. Բաղալյան

Կ.Տ.

Հավելված N 2
« 02 » « 05 » 2022 թ.
N 213 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Աշխատարաններ՝ միջազգային փորձի փոխանակմամբ ծրագրի իրականացման ծախսերի (2022 թվականին)

Հ/Հ	Ծախսատեսակի անվանումը	Չ/Մ	Քանակ	Մեկ միավորի արժեքը (հազար դրամ)	Գումարը (հազար դրամ)
1	**Ստեղծագործական անձնակազմի վարձատրություն** (ներառյալ հարկերը)				**2310.0**
	ծրագրի ղեկավար (3 ամիս)	մարդ	1	400.0	400.0
	ծրագրի համակարգող (3 ամիս)	մարդ	1	300.0	300.0
	գրաֆիկական դիզայներ (2 ամիս)	մարդ	1	250.0	250.0
	աշխատարանների տեղացի օգնականներ (2 մասնագետ, 20 աշխատարան, յուր. 2 ժամ, 1 սշխ. ՝ 9000 դրամ	մարդ	2	180.0	360.0
	թարգմանիչ (բանավոր թարգմանություն՝ անգլերեն-հայերեն, հայերեն անգլերեն, 20 աշխատարան, յուր՝ 10.0 հազ. դրամ)	մարդ	1	200.0	200.0
	ավարտական պերֆորմանսի փորձավար (1 ամիս)	մարդ	1	150.0	150.0
	ցուցահանդեսի համադրող	մարդ	1	150.0	150.0
	օպերատոր (1 ամիս)	մարդ	1	150.0	150.0
	լուսանկարիչ (1 ամիս)	մարդ	1	150.0	150.0
	ֆինանսական համակարգող	մարդ	1	200.0	200.0
2	**Հանրահռչակմանն ուղղված ծախսեր**				**287.5**
	բաններ (2մ×2մ)	հատ	2	25.0	50.0
	բացիկ (5 տեսակ, յուր.՝ 50 օրինակ)	հատ	250	0.41	102.5
	պիտակ	հատ	100	0.15	15.0
	սերտիֆիկատ	հատ	400	0.3	120.0
3	**Նյութեր**				**650.0**
	ստվարաթուղթ	հատ	220	1.0	220.0
	ներկեր (10 գույն)	հատ	100	3.3	330.0
	նախաներկ	լիտր	10	10.0	100.0
4	**Տրանսպորտի վարձակալություն**				**350.0**
	ավտոբուս (50 տեղանոց, Երևան-Վանաձոր-Երևան)	հատ	1	110.0	110.0
	ավտոբուս (50 տեղանոց, Գորիս-Երևան-Գորիս)	հատ	1	240.0	240.0

5	**Կեցության ծախսեր**				**1394.0**
	հյուրանոցային ծախսեր (Երևանում)	մարդ/օր	1/14	25.0	350.0
	հյուրանոցային ծախսեր (Վանաձորում)	մարդ/օր	10/3	14.0	420.0
	հյուրանոցային ծախսեր (Գորիսում)	մարդ/օր	10/3	12.0	360.0
	սննդի ծախսեր (Երևանում)	մարդ/օր	2/7	3.0	42.0
	սննդի ծախսեր (Երևանում)	մարդ/օր	1/14	3.0	42.0
	սննդի ծախսեր (Վանաձորում)	մարդ/օր	10/3	3.0	90.0
	սննդի ծախսեր (Գորիսում)	մարդ/օր	10/3	3.0	90.0
	ԸՆԴԱՄԵՆԸ				**4991.5**
	ԱԱՀ*				**998.3**
	ԸՆԴԱՄԵՆԸ, ներառյալ ԱԱՀ				**5989.8**
	* ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կատարողի կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:				

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
_____ Գ. Մաֆարյան
Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության
ազգային կենտրոն» ՓԲԸ
Ք. Երևան, Աբովյան 11

«Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570022619620100, ՀՎՀՀ 02514253
Հեռ.՝ 93 82 54 59, 091 49 48 44
Տնօրեն՝
_____ Ա. Բաղալյան
Կ. Տ.